

ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

Այսու կը հաղորդենք թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Միութեան Մասնաճիւղերուն, թեմական Պատգամաւորներուն, յարակից կազմակերպութիւններուն եւ մեր համայն հաւատացեալ ժողովուրդին, թէ թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան նոր պաշտօններու հետեւեալ նշանակումները կատարեց:

ԱՐԺ. Տ. ՆԱՐԵԿ ԱԲԱԳ ՔՅՆՅ. ՄԱՏԱՐԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻԸ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ
ԼԱ ՎԸՐՆԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ուրախութեամբ կը հաղորդենք, որ Արժ. Տ Նարեկ Աւագ Քինյ. Մատարեան, որ 1995ի Մարտ 1էն ի վեր թեմէն ներս կը ծառայէր որպէս Հոգեւոր Հովիւը Իսթ Լոս Անճելըսի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ, ապա Եկեղեցւոյ վաճառումէն ետք ժամանակաւոր կերպով Նորթ Հալիվուտի մէջ հաստատուած Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ, Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ Հոգեւոր Հովիւը նշանակուեցաւ Լա Վըրնի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ: Տէր Հայրը իր պաշտօնը ստանձնեց Յունուար 1ին, 2010: Առ ի գիտութիւն, Տէր Հայրը Սրբազան Հօր կողմէ նշանակուած է նաեւ թեմիս Երաժշտութեան Վարիչը (Music Director):

ՀԱԿԻՐԾ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԺ. Տ. ՆԱՐԵԿ ԱԲԱԳ ՔՅՆՅ. ՄԱՏԱՐԵԱՆԻ

Արժ. Տ. Նարեկ Աւագ Քահանայ Մատարեան ծնած է Յուլիս 10, 1946ին, Սուրիոյ Այն Էլ Արաբ քաղաքին մէջ: 1960ին շրջանաւարտ ըլլալով Երկրորդական Վարժարանէն, ան կը մեկնի Երուսաղէմ եւ կ'ընդունուի Ժառանգաւորաց Վարժարան իբրեւ ուսանող: 1962ին ձգելով վանքը կը վերադառնայ Հալէպ: 1965ին Մատարեան գերդաստանը կը ներգաղթէ Հայաստան եւ կը բնակի Երեւան քաղաքին մէջ, ուր ան կը շարունակէ իր ուսումը Երաժշտութեան բնագաւառին մէջ:

Տէր Հայրը կ'ամուսնանայ 1969ին եւ երկրին օրէնքին համաձայն կը մեկնի զինուորութեան: Ծառայութենէն վերադառնալէ ետք կը շարունակէ իր ուսումը Երեւանի Կոմիտասի անուան Քոնսերվատորիին մէջ՝ իբրեւ երաժիշտ եւ միեւնոյն ժամանակ կ'աշխատի որպէս երգիչ-Հայաստանի Պետական Օփերային մէջ: Տէր Հայրը համատեղ կ'դասուանդէ Երեւանի համար 105 դպրոցին մէջ՝ որպէս ուսուցիչ: 1976ին շրջանաւարտ կ'ըլլայ:

1979ին կ'ընդունուի Սուրբ Էջմիածնի Հոգեւոր Գեմարանի Քահանայական Դասարան՝ իբրեւ ուսանող: 1980ի Փետրուարին, Գերշ. Ս. Յուսիկ Արքեպիսկոպոս Սանթուրեանի ձեռամբ, Էջմիածին քաղաքի Սուրբ Գայիանէ Վանքին մէջ, կը ձեռնադրուի ամուսնացեալ Քահանայ: Նոյն տարուան Ապրիլ ամսուն, կը նշանակուի Էջմիածին քաղաքի Սուրբ Շողակաթ Վանքին մէջ ծառայելու իբրեւ ծիսակատար Քահանայ:

Յունուար 1981էն մինչեւ 1992, Տէր Հայրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ ծառայած է իբրեւ Մայր Տաճարի Լուսարարապետի Օգնական, միաժամանակ իբրեւ եկեղեցական Երաժշտութեան ուսուցիչ, դասավանդած է Հոգեւոր Գեմարանին մէջ:

Անցնող տարիներուն իր հոգեւոր նուիրեալ ծառայութեան համար Տ. Նարեկ Քահանան Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Ս. Վազգէն Ա. Հայրապետի կողմէ պարգևատրուած է »Քահանայական Լանջախաչ«ով, ծաղկեայ փիլոն կրելու իրաւունքով եւ »Աւագ Քահանայութեան« պատիւով:

Մայիս 1992ին, Տ. Նարեկ Աւագ Քահանան ընտանեօք կը տեղափոխուի Միացեալ Նահանգներ եւ կը բնակի Գալիֆորնիոյ Արեւելեան Լոս Անճելըս քաղաքին մէջ: Հոգեւոր Հովիւ նշանակուելէն առաջ թեմէն ներս կը ծառայէ որպէս Այցելու Հոգեւոր Հովիւ:

Կը շնորհաւորենք Տէր Հօր նոր պաշտօնը եւ յարատեւ յաջողութիւն կը մաղթենք իրեն:

ԱՐԺ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՅՆՅ. ԹԱՇՃԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻԻԸ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ
ՎԵՆԹՈՒՐԱ ԳԱՒԱՌԻ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հոգեպէս երջանիկ ենք, որ շնորհիւ Առաջնորդ Սրբազան Հօր ջանքերուն, թեմէն ներս նոր Ծուխեր եւ համայնքներ կը կազմուին եւ կ'ունենան մնայուն Հոգեւոր Հովիւներ եւ կամ Այցելու Հոգեւոր Հովիւներ:

Ուրախ ենք նոյնպէս յայտնելու, թէ Ֆրանսայի Առնօվիլ Լէ Կօնէս Քաղաքի Վարագայ Սուրբ Խաչ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Յարութիւն Քինյ. Թաշճեան Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ Հոգեւոր Հովիւը նշանակուեցաւ Վենթուրա Գաւառի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ եւ այցելու Հոգեւոր Հովիւը Անթիլոփի Վէլիի՝ Փալմտէլի Հայց. Եկեղեցւոյ: Առ ի գիտութիւն, Տէր Հայրը Առաջնորդ Սրբազան Հօր հրաւերով թեմն այցելեց եւ Խաչվերացի Տօնին օրը՝ Կիրակի, Սեպտեմբեր 13ին, 2009, Սուրբ Պատարագ մատոյց եւ քարոզեց Լա Վըրնի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

ՀԱԿԻՐՃ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԺ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՅՆՅ. ԹԱՇՃԵԱՆԻ

Ծնած է Հալէպ, Սուրիա, 1970ին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Սահակեան Վարժարանին մէջ: 1983ին որպէս ուսանող ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքէն ներս: 1988ին Սարկաւազ ձեռնադրուած է Գերշ. Տ. Վարդան Եպս. Տեմիրճեանի ձեռամբ: 1990ին շրջանաւարտ եղած է Անթիլիասի Դպրեվանքէն:

1990-1991 Հալէպի Հայկազեան Վարժարանէն ներս ծառայած է որպէս ուսուցիչ Կրօնի, Հայոց Պատմութեան եւ Հայ Գրականութեան, միեւնոյն ատեն մաս կազմած է Հալէպի Բերիոյ Թեմի «Գանձասար» պարբերաբերթի խմբագրական կազմին:

Փետրուար 29ին, 1992 Հալէպի մէջ կ'ամուսնանայ Օրիորդ Թալին Թանաշեանի հետ եւ միասնաբար կը փոխադրուին Փարիզ, Ֆրանսա, ուր Ապրիլ 26ին, 1992 Սուրբ Յովիաննու Սկրտիչ Հայց. Եկեղեցւոյ մէջ քահանայ կը ձեռնադրուի եւ կ'օծուի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նազգաշեանի ձեռամբ:

1992ին Հոգեւոր Հովիւը կը նշանակուի Շափիլի, (Ֆրանսա) Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ, ուր կը ծառայէ մինչեւ Յունիս 2002, ապա Հոգեւոր Հովիւը կը նշանակուի Պելճիգայի Սուրբ Մարիամ Մագդաղենացի Հայց. Եկեղեցւոյ:

Բացի Հայերէնէ Տէր Հայրը կը խօսի Ֆրանսերէն, Անգլերէն, Արաբերէն եւ Թրքերէն: 1994-1995 ձայնասփիւռի (Radio AYP) միջոցաւ Հայերէնով եւ Ֆրանսերէնով կը վարէ կրօնական յայտագիրը: Շատ մը հայ թերթերու յօդուածներ կը գրէ տեղական Հայ Եկեղեցիներու եւ դպրոցներու մասին: Հովուական իր պարտականութիւններու կողքին, Տէր Հայրը Հայերէն Լեզու կը դասաւանդէ Հայ Դպրոցներուն մէջ:

Տէր Հայրը եւ Երեցկին Թալինը բախտաւորուած են երկու զաւակներով: Նորայրը 15 տարեկան է, իսկ Մայտան՝ 13: Տէր Հայրը եւ իր ընտանիքը Ֆրանսական հպատակութիւն ունին:

Նոյնպէս կը շնորհաւորենք Տէր Յարութիւնը եւ ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք իր հոգեւոր առաքելութեան:

ԲՐՇ. ՅՈՎՆԱՆ ՍՐԿ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍԱՐԿԱԲԱԳԸ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ
ԱՆԹԻԼՈՓ ՎԷԼԻԻ, ՓԱԼՄՏԵՅԼԻ ՀԱՅՑ.
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Քահանայութեան թեկնածու՝ Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեան, որ ներկայիս Աստուածաբանական իր բարձրագոյն ուսումը կը ստանայ, նուիրեալ ծառայութիւն մատոյց Պըրպէնքի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ, Առաջնորդարան:

Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ Յովնան Սարկաւագ Պատասխանատու Սարկաւագը կը նշանակուի Անթիլոփ Վելիի, Փալմտէյլի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ:

ՀԱԿԻՐՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ
ԲՐՇ. ՅՈՎՆԱՆ ՍՐԿ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ

Բրշ. Յովնան Սրկ. Վարդանեան ծնած է 1982ին, Հայաստանի Սիսիան Քաղաքին մէջ: 1988-1996 իր ուսումը ստացած է Սիսիանի թիւ 3 միջնակարգ դպրոցին մէջ: 1992-1996 ծառայած է Սիսիանի Սուրբ Յովնաննէս Եկեղեցւոյ մէջ: 1996-2000 ուսանած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան ժառանգաւորաց Վարժարանին մէջ: 2000-2002 ծառայած է Հայաստանի բանկին մէջ: 2003 հիմնադրած եւ ղեկավարած է Սիսիանի Քրիստոնեայ Երիտասարդաց Միութիւնը:

2003ին ընդունուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի *»Քահանայից Պատրաստման Լսարան«* եւ շրջանաւարտ եղած է 2005ին: 2006 Մայիս 28ին Սիւնեաց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբրահամ Եպս. Մկրտչեանի ձեռամբ ձեռնադրուած է Սարկաւագ: 2006-2007 Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ ծառայած է Սիւնեաց Թեմին մէջ: 2007ին հիմնադրած եւ խմբագրած է *»Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ«* հոգեւոր, մշակութային պարբերականը:

2007ին Լոս Անճելըսի մէջ ամուսնացած է Օրիորդ Ալենուշ Եղնագարի հետ: Գալիֆորնիա փոխադրուելէն ետք, 2008 թուի Յունուարէն ի վեր մինչեւ վերջերս, կը ծառայէր Պըրպէնքի Հայց. Եկեղեցիէն ներս, Առաջնորդարան:

2008 թուի Սեպտեմբերէն ի վեր Աստուածաբանական իր ուսումը կը շարունակէ Գլերմոնթ Համալսարանին մէջ, Գալիֆորնիա: